ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿՈՒՀԻ ՄԱՆՎԵԼԻ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ, ԱԶԳԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ (20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

Թ. 00.06 «Մշակութաբանություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2021

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ պ. գ. դ. ***Հ. Լ. Պետրոսյան***

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ. գ. դ. ***Մ. Վ. Գալստյան***
պ. գ. թ. ***Հ. Վ. Պիկիչյան***

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պատմության թանգարան

Պաշտպանությունը կայանալու է 2021 թ. սեպտեմբերի 9-ին, ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հնագիտության և ազգագրության 007 մասնագիտական խորհրդում (հասցե՝ Երևան-0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. հուլիսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Պատմ. գիտ. թեկնածու **Ա. Է. Հարությունյան**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: ՀՀ մշակույթի ոլորտն անկախացումից ի վեր գտնվում է նոր մոդելների և ձևաչափերի փնտրտուքի մեջ: Մի կողմից այն փորձում է ընդօրինակել արևմտյան երկրների հաջողված փորձերը, մյուս կողմից՝ հաղթահարել խորհրդային ավտորիտար ռեժիմի մշակութային քաղաքականության պրակտիկաները, մեխանիզմները, գործիքները և տարրերը: Այս առումով կարևոր է մշակույթի ոլորտում իրականացվող քաղաքականության քննությունը, ինչը հնարավորություն կտա հասկանալ և ուրվագծել մշակույթի զարգացումներն ու հեռանկարները: Անկախության տարիներին ձևավորված մշակութային քաղաքականության ուսումնասիրությունը ենթադրում է երկու առանցքային դրսևորումների քննություն. առաջինը՝ «խորհրդահայ ժառանգությունը», երկրորդը՝ արևմտյան փորձի և պրակտիկաների ներթափանցումը և տեղայնացումը:

Մշակույթի ոլորտում իրականացվող քաղաքականության վերլուծությունը և՛ տեսական, և՛ գործնական կարևոր նշանակություն ունի ինչպես գիտության զարգացման, այնպես էլ պետական իշխանությունների՝ մշակույթի ոլորտում պրակտիկ գործունեության իրականացման, մոդելավորման և ոլորտի զարգացման տեսանկյունից:

Սույն ատենախոսական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նաև ՀՀ պետական մշակութային քաղաքականության ոլորտում հեռահար առաջարկների համար գիտական հենքի ստեղծման անհրաժեշտությամբ:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսական աշխատանքի հիմնական նպատակն է մշակութաբանական քննությամբ պարզել ՀՀ մշակութային քաղաքականության ձևավորման և զարգացման գործընթացն անկախությունից ի վեր՝ հատուկ կարևորելով խորհրդային մշակութային քաղաքականությունը, մեխանիզմները և գործիքները, որոնք էական ազդեցություն ունեցան ՀՀ մշակութային քաղաքականության վրա, ինչպես նաև արևմտյան փորձը և պրակտիկաները, որոնք որդեգրվեցին ՀՀ նորանկախ իշխանությունների կողմից, ադապտացվեցին և տեղայնացվեցին՝ կրելով որոշակի ձևափոխություններ:

Այս նպատակի իրականացումը ենթադրում է հետևյալ խնդիրների քննությունը.

Առաջին. քանի որ մերօրյա մշակութային քաղաքականությունն անհնար է դիտարկել «խորհրդային համատեքստից» կտրված, առաջնային խնդիր է քննել խորհրդային մշակութային քաղաքականության բովան-

դակությունը, մանրամասնել նրա ինստիտուցիոնալ և գործիքային ասպեկտները, վերլուծել և գնահատել դրանց դերակատարումները Հայաստանի անկախացումից հետո:

Երկրորդ. «ազգային մշակույթ» կոնցեպտը, որը հատկապես սկսեց ակտիվորեն շրջանառվել դեռևս 20-րդ դարի 60-ական թթ. և կապված էր խորհրդային մշակութային քաղաքականության մեջ խրուշչովյան բարեփոխումների և «ազատականացման» հետ, արտահայտվեց նաև հետխորհրդային շրջանում: Ներկա հետազոտության խնդիրն է քննել այդ դրսևորումները, ներկայացնել «ազգային մշակույթ» կոնցեպտը, դրա ձևավորման նախապատմությունը և զարգացումները խորհրդային և հետխորհրդային շրջաններում:

Երրորդ. անկախության երկրորդ և երրորդ տասնամյակներին Հայաստանն ընդգրկվեց արևմտյան մշակութային քաղաքականության գործընթացների մեջ, ընդլայնեց համագործակցությունը միջազգային կառույցների հետ, տեղայնացրեց արևմտյան հաջողված փորձերն իրավա-օրենսդրական և ենթակառուցվածքային մակարդակներում: Աշխատանքի հիմնական խնդիրներից է ներկայացնել այդ տեղայնացման, ադապտացման և փոխակերպման փորձերը և պրակտիկաները:

Չորրորդ. անկախության՝ արդեն շուրջ երեք տասնամյակները միանման և միահոս չեն ընթացել: Դա վերաբերում է նաև մշակութային գործընթացներին և դրանց կարգավորմանն ուղղված քաղաքականությանը: Այս առումով ակտուալ են մշակութային քաղաքականության զարգացման և փոփոխությունների դինամիկան ու փուլաբաժանումը: Մշակութային քաղաքականության փուլաբաժանումն այս ուսումնասիրության առաջնային խնդիրներից էր: Նկատենք, որ մշակութային քաղաքականության ընթացքի փուլաբաժանման հիմնարար փորձեր դեռ չկան: Աշխատանքում առաջարկված փուլաբաժանումը նման առաջին փորձն է, որ հիմքում ունի հայաստանյան օրենսդրական դաշտի կարգավորումները, քաղաքական առաջնորդի դերակատարությունը և մշակութային քաղաքականության «միջազգայնացման» պրակտիկան:

Վերոնշյալ խնդիրներն ուսումնասիրելու, քննելու և ներկայացնելու տեսանկյունից աշխատանքում կարևորվել է հետևյալ հետազոտական հարցերի դիտարկումը.

1. Ի՞նչ մեխանիզմներ և գործիքներ է կիրառել Խորհրդային Միությունը՝ իր գաղափարական հիմնադրույթները քաղաքականության վերածելու համար: Մշակույթի ինչպիսի՞ ընկալում է ձևավորվել: Որո՞նք են եղել խորհրդային մշակույթի ձևավորման և տարածման հիմնական

ուղիները: Որո՞նք են խորհրդային մշակութային քաղաքականության փուլաբաժանումները, ի՞նչ դերակատարում ունի քաղաքական առաջնորդը մշակութային քաղաքականության ձևափոխման մեջ:

2. Ինչպե՞ս են արևմուտքից փոխառված մշակույթի բնորոշման, կառավարման ու հանրահռչակման մեխանիզմները հաղորդակցվում երկրում ձևավորվող սոցիալ-մշակութային համակարգի հետ: Արևմտյան մշակութային քաղաքականության ինչպիսի՞ մոտեցումներ որդեգրվեցին Հայաստանի Երրորդ Հանրապետության իշխանությունների կողմից և տեղական ի՞նչ մոդելներ ձևավորվեցին:

3. Կարելի՞ է արդյոք մոդելավորել հայաստանյան մշակութային գործընթացները, ի՞նչ մոդելներ են ուրվագծվում, ինչպիսի՞ գործոններ են ազդում մշակութային քաղաքականության այս կամ այն մոդելի ձևավորման վրա:

Աշխատանքի գիտական նորույթը և գործնական նշանակությունը: Աշխատանքում ներակայացված են մշակութային քաղաքականության նոր համակարգի ձևավորման փորձերն ու ձևափոխումները, գործիքների և մեխանիզմների ընտրությունը, մշակութային քաղաքականության օրենսդրական դաշտի կարգավորումները, մշակույթի ընկալման փոփոխությունները, մշակույթի և հարակից ոլորտների հարաբերությունների զարգացումը Հայաստանի անկախացումից մինչև «Թավշյա» հեղափոխություն (2018 թ.): Համաձայն կատարված հետազոտության արդյունքների՝ 1991-2018 թթ. ՀՀ մշակութային քաղաքականությունը կարելի է դիտարկել զարգացման երեք փուլերով, որոնք համապատասխանում են ՀՀ երեք նախագահների կառավարման տարիներին՝ Լևոն Տեր-Պետրոսյան (1991-1998), Ռոբերտ Քոչարյան (1998-2008) և Սերժ Սարգսյան (2008-2018): Ընդ որում, որպես մշակութային քաղաքականության լեյտմոտիվ՝ նախ և առաջ հանդես է գալիս մշակութային քաղաքականության փուլաբաժանումը, որը հիմնված է միջազգային ակտիվ համագործակցության և որպես դրա հետևանք՝ օրենսդրական դաշտի կարգավորումների վրա:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը: Հաշվի առնելով ատենախոսական աշխատանքի հիմնական նպատակը, խնդիրները, առաջադրված հետազոտական հարցերը՝ կատարվել է միջգիտակարգային ուսումնասիրություն՝ օգտագործելով մշակութային մարդաբանության, պատմագիտության, մշակույթի սոցիոլոգիայի և քաղաքագիտության հետազոտական ու վերլուծական գործիքները:

Հետազոտության մեջ ներառված հիմնական հասկացությունների (մշակութային քաղաքականություն, խորհրդային մշակույթ, մշակութային

հեղափոխություն, խորհրդային ազգայնականություն, ազգային զարթոնք, մշակույթի տնտեսականացում, մշակութային քաղաքականության գործիքային տեսություն, մշակութային անիմացիա և այլն) բնորոշման և կիրառման շրջանակները հասկանալու համար կատարվել է տեսական-գիտական աշխատանքների բովանդակային վերլուծություն:

Մշակութային գործընթացները քննարկելու և ոլորտի խնդիրները ներկայացնելու համար իրականացվել են պաշտոնական փաստաթղթերի, սկզբնաղբյուրների, արխիվային նյութերի վերլուծություններ:

Մշակութային քաղաքականության կառուցվածքային և բովանդակային մեխանիզմները խորհրդային և հետխորհրդային Հայաստանում առավել պարզ հասկանալու, քննելու և ներկայացնելու համար առանձնացվել են մշակութային քաղաքականությունն արտացոլող երկու առանցքային կառույցներ՝ մշակույթի տները և ստեղծագործական միությունները: Այս երկու կառույցները հիմնարար դեր են խաղացել մի դեպքում հանրային գաղափարա-մշակութային դաշտի ձևավորման, մյուս դեպքում՝ ինտելեկտուալ-գաղափարական վերնախավի ձևավորման գործում: Հետևաբար, այս կառույցների քննությունը հնարավորություն է տալիս հասկանալ և վերլուծել հետխորհրդային մշակութային քաղաքականության մեջ կատարված ֆորմալ և ոչ ֆորմալ, իմաստաբանական և ձևաբանական փոփոխությունները:

Մշակութային ինստիտուտների, պետական ենթակառուցվածքի ուսումնասիրության նպատակով գլխավորապես օգտագործվել է խորացված հարցազրույցի մեթոդը: Խորացված հետազոտություններն իրականացվել են կիսաձևայնացված հարցազրույցի միջոցով:

Մշակույթի տների հետազոտությունը կատարվել է 2015-2018 թթ.: Այն ներառել է ՀՀ Արարատի, Արմավիրի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի, Արագածոտնի մարզկենտրոնները, խոշոր քաղաքները և համայնքները: Խորացված հարցազրույցներ են անցկացվել մշակույթի տների ներկա և նախկին տնօրենների, գեղմասվարների, հաշվապահների, մշակույթի տան այցելուների, համայնքապետերի հետ: Ուսումնասիրվել են մարզային արխիվները, համայնքապետարաններում հասանելի փաստաթղթերը և հրամանները, որոնք վերաբերում են մշակույթի տների ձևավորման պատմությանը, գործունեությանը խորհրդային և հետխորհրդային շրջանում:

Դաշտային աշխատանքների մյուս բաժինը նվիրված է ստեղծագործական միությունների գործունեության ուսումնասիրությանը: Խորացված հարցազրույցներ են անցկացվել ստեղծագործական միությունների ներկա և նախկին նախագահների, անդամների, ինչպես

նաև ստեղծագործական միություններում չանդամագրված մշակութային գործիչների հետ՝ հատկապես կարևորելով այն հարցը, թե ինչո՞ւ չեն անդամագրվում, կամ ի՞նչ խնդիրներ են տեսնում ստեղծագործական միությունների արդի գործունեության մեջ: Ստեղծագործական միությունների ձևավորման պատճառները, գործունեությունը, փոխակերպումները խորհրդային և հետխորհրդային շրջանում հասկանալու համար ուսումնասիրվել են համապատասխան արխիվային նյութերը, ՀՀ օրենքները, ՀԼՄ-ների համապատասխան հրապարակումները:

Ատենախոսության փորձաքննությունը և հրապարակումները: Աշխատանքը քննարկվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի մշակութաբանության ամբիոնում՝ արժանանալով դրական կարծիքի: Քննարկվող հիմնական դրույթները զեկուցումներով ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Ատենախոսության որոշ հիմնադրույթներ հրատարակվել են գիտական հոդվածներում. հրատարակությունների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է 173 էջ ընդգրկող տեքստային մասից՝ ներածությունից, երեք գլխից, ութ ենթագլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Հավելվածում ներկայացված են հետազոտության մեջ ներառված մշակույթի տների ցանկը, հարցվողների տվյալները (անուն, ազգանուն, զբաղվածություն), հետազոտված ստեղծագործական միությունների ցանկը, փորձագիտական հարցումների մասնակիցների տվյալները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության ներածական հատվածում հիմնավորվում է թեմայի հետազոտության արդիականությունը, ներկայացվում են թեմայի գիտական հիմնավորումը, հետազոտության նպատակը, խնդիրները, ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, հետազոտության գիտական և գործնական նշանակությունը, համառոտ ներկայացվում է գիտական գրականության մեջ մշակութային քաղաքականության վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները և տեսական մոտեցումները:

Որպես կանոն, մշակույթի ընկալումը պայմանավորում է մշակութային քաղաքականության մոդելի ձևավորումը (Թ. Միլլեր, Ջ. Յուդիս): Կախված նրանից, թե ինչպիսի հանրային ընկալում ունի մշակույթը,

հասարակության մեջ ինչ գործառույթներ է կատարում, կարելի է ենթադրել, թե ինչ տիպի մշակութային քաղաքականություն կձևավորվի տվյալ հասարակության մեջ: Կարևորելով մշակույթի հանրային և պետական ընկալման առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է ընդգծել մշակութային քաղաքականության մոդելի ձևավորման վրա ազդող մյուս տարրերը նույնպես, ինչպես, օրինակ՝ պետական ռեսուրսները, պետական կամ ազգային գաղափարախոսությունը կամ դրա բացակայությունը, ենթակառուցվածքների առկայությունը և այլն (Թ. Բեննեթ):

«Մշակույթ» և «մշակութային քաղաքականություն» հասկացությունները դասվում են այն բարդ և բազմաբովանդակ եզրերի շարքին, որոնց բնորոշման, մեկնաբանման և սահմանման շուրջ մշակվել և այսօր էլ շարունակում են մշակվել բազմաթիվ մոտեցումներ և տեսություններ: Մշակույթը՝ լինելով լայն հասկացություն, որի մարդաբանական ընկալումը ներառում է մարդկային գործունեության յուրաքանչյուր ոլորտ, սույն ատենախոսական աշխատանքում այն ունի ավելի նեղ և գաղափարականացված ընկալում: Ըստ այդմ՝ ատենախոսական աշխատանքում մշակութային քաղաքականությունը դիտարկվում է որպես հստակ և կայուն տեսական-գործառական համակարգ (Թ. Միլլեր, Ջ. Յուդիս), որը, կախված քաղաքական, տնտեսական և սոցիալական մի շարք գործոններից՝ կարող է փոխել իր հետաքրքրությունների ու առաջնահերթությունների կենտրոնը և հարմարվել նոր իրողություններին:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Ատենախոսական աշխատանքի առաջին գլխում քննարկվում են խորհրդահայ մշակութային քաղաքականության կայացման փուլերը, գործիքները, մեխանիզմները, մշակութային ինստիտուտների ցանցի ձևավորումը, մշակույթի կառավարման ենթակառուցվածքի (ագիտպրոպ) ստեղծումը, խորհրդային օրենքները և հրամանները: Աշխատանքում առավել մանրամասն քննվել են խորհրդային 1960-ական թթ., որի ժամանակ ստեղծված մշակութային քաղաքականության մի շարք մեխանիզմներ և գործիքներ շարունակել են էական դերակատարություն ունենալ նաև Հայաստանի անկախացումից հետո: Աշխատանքի առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

1.1 Խորհրդային մշակութային քաղաքականության ձևավորումը և հետագա զարգացումը:

Խորհրդային Միության պատմությունը, մշակույթը, քաղաքականությունն արժանացել են իրարամերժ գնահատականների տարբեր մասնագետների կողմից (պատմաբաններ, սոցիոլոգներ, մշակութային մարդաբաններ, միջազգայնագետներ): Մի կողմից խորհրդային ամբողջատիրական համակարգը դիտարկվում է որպես ազգային մշակույթներն անտեսող, ոտնահարող բռնապետական հասարակարգ, «գաղութատիրական կայսրություն», որի ազդեցությունը բոլոր ոլորտների վրա էր տարածվում՝ սկսած տնտեսությունից մինչև առողջապահություն և մշակույթ: Մյուս կողմից՝ անժխտելի է այն փաստը, որ խորհրդային իշխանությունների ջանքերի շնորհիվ միութենական հանրապետությունները գրանցեցին լուրջ ձեռքբերումներ և վերելքներ թե՛ գիտական, թե՛ տնտեսական և թե՛ մշակութային ոլորտներում:

Ներկա աշխատանքում առաջնային է դիտարկվել շրջափուլային մոտեցումը (խորհրդահայ մշակութային քաղաքականության առաջընթացն ու հետընթացը, ձեռքբերումներն ու անհաջողությունները կոնկրետ շրջափուլի զարգացման կամ հետընթացի տրամաբանության հետ են կապվում)՝ հատուկ շեշտելով հայաստանյան մշակութային իրողությունների դրսևորման օրինաչափություններն այդ շրջափուլերում:

1.2 Խորհրդային մշակութային քաղաքականությունը 1920-ական և 1930-ական թթ.. ինտերնացիոնալիզմը և «խորհրդային ազգայնականությունը»:

Խորհրդային մշակութային քաղաքականության ուսումնասիրության համար կարևոր է առանձնացնել մի քանի տեսություններ, որոնք թույլ կտան ներկայացնել և քննել այն մշակութային և քաղաքական գործընթացները, որոնք պայմանավորեցին խորհրդային մշակութային քաղաքականության բնույթը: Այս տեսանկյունից առանձնակի նշելի է Վ. Պապերնիի առաջարկած «Մշակույթ 2» տեսությունը, որտեղ հեղինակն առաջարկում է 1920-ական և 1930-ական թթ. ներկայացնել որպես «Մշակույթ 1» (մշակույթի հավասարապաշտություն, մշակույթի հորիզոնական տարածում) և «Մշակույթ 2» (կենտրոնացված ամբողջատիրական մշակույթ, մշակույթի ուղղահայաց տարածում): Այս տեսանկյունից ուսումնասիրվել են՝ «մշակութային հեղափոխությունը» և նոր տիպի՝ խորհրդային մշակույթի կառուցումը, մշակույթի հորիզոնական տարածման գործիքները՝ մշակույթի կառավարման ենթակառուցվածքի ձևավորումը, իրավական դաշտի կայացումը (խորհրդային դեկրետների և հրամանների ընդունում), մշակութային ինստիտուտների լայն ցանցի

ստեղծումը և խորհրդային «ինտելիգենցիայի» ձևավորումը: 1920-ական թթ. Խորհրդային Հայաստանում բնորոշվեցին անգրագիտության վերացմանն ուղղված քաղաքականության մշակմամբ և իրականացմամբ, որի շրջանակներում էլ ձևավորվեցին մշակութային զանազան կառույցներ՝ խրճիթ-ընթերցարաններ, կարմիր անկյուններ, գյուղական ակումբներ, լիկկայան, բանֆակեր և այլն: Այս կառույցների մեծ մասը 1940-ական թթ., երբ անգրագիտության վերացման խնդիրն արդեն լուծված էր՝ դադարեցին գոյություն ունենալ:

1930-ական թթ. բնորոշվեցին մշակույթի կառավարման համակարգի կենտրոնացմամբ, մշակութային նոր տիպի ինստիտուտների ձևավորմամբ (ստեղծագործական միություններ, ագիտպրոպ), մշակույթի կառավարման խիստ կենտրոնացված մոդելի ստեղծմամբ, նոր՝ պրոլետարական «ինտելիգենցիայի» ձևավորմամբ: Կառուցվում է իշխանություն և մտավորականություն փոխհարաբերությունների նոր մեխանիզմների ու կարգավորումների համակարգ (մի կողմից խրախուսումը, արվեստի գործիչների և մտավորականների կենցաղային պայմանների բարելավումը, արտոնությունները, մյուս կողմից՝ «կոպիտ ուժի» կիրառումը որպես հիմնական գործիք՝ ձերբակալություններ, աքսոր, գնդակահարություններ և այլն):

Ուշագրավ է, որ ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները՝ մշակութային քաղաքականության խրախուսման գործիքները շարունակեցին կենսունակ մնալ նաև անկախության տարիներին. ավելին, 2000-ական թթ. իշխանություն-մտավորականություն փոխհարաբերությունները կարգավորվում էին մեծամասամբ «փափուկ ուժի» միջոցով (շքանշաններ, զանազան կոչումներ, նյութական աջակցություն, պատվոգրեր, մրցանակներ և այլն):

1.3 «Խորհրդայինը» և «ազգայինը» մշակութային քաղաքականության մեջ 1950-60-ական թթ.:

1960-ական թթ.՝ գաղափարական որոշակի «ազատականացման» պայմաններում, խորհրդային մշակութային քաղաքականության մեխանիզմների և գործիքների փոփոխությունների քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ խորհրդահայ մշակութային քաղաքականությունը մի կողմից ձևավորեց մշակութային որոշակի արժեհամակարգ ունեցող, գրագետ հանրույթ, մյուս կողմից՝ էապես ազդեց այդ հանրույթի մտակերտվածքի և աշխարհընկալման վրա: 1960-ական թթ. մշակութային գործընթացները, ազատության մասին նոր տեսլականի ձևավորումը, ազգային արժեքների «ստեղծումն» ու ամրապնդումն արդեն 1990-

ական թթ.՝ ՀՀ անկախության տարիներին, մշակութային քաղաքակա-նության ձևավորման հիմքը դարձան:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ.
ՀՀ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ատենախոսական աշխատանքի երկրորդ գլխում ներկայացված են մշակութային քաղաքականության նոր համակարգի ձևավորումը, օրենսդրական դաշտի կարգավորումները, մշակույթի տնտեսա-կանացման առաջին փորձերը: Հատուկ ուշադրություն է դարձված քաղա-քական առաջնորդի և նրա վարած մշակութային քաղաքականության ուսումնասիրությանը: Աշխատանքի երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

2.1 Մշակույթի ոլորտի օրենսդրական դաշտի կարգավորման խնդիրները:

Աշխատանքի այս ենթագլխում ներկայացված են անկախացումից հետո Հայաստանի Երրորդ Հանրապետության սոցիալ-մշակութային գործընթացները: Մեր կողմից առաջարկվել է մշակութային քաղաքականության փուլաբաժանում՝ հիմնված քաղաքական առաջնորդի դերակատարության, միջազգային համագործակցության և որպես դրա հետևանք՝ օրենսդրական դաշտի կարգավորումների վրա: Առանձին ենթագլխով ներկայացված են մշակույթի ոլորտի օրենսդրական դաշտի խնդիրները, օրենքներ ընդունելու «խորհրդային», «ռուսական» և «արևմտյան» մոդելները, օրենքների կիրարկման առաջին փորձերի վերլուծությունը: Աշխատանքում ներկայացված է նաև օրենքների մշակման բուն գործընթացը (ինստիտուտներ, փորձագիտական խմբեր, անհատներ, օրենսդրական նախագծերի մշակման մեխանիզմներ և ընթացակարգեր):

2.2 Մշակույթի տնտեսականացման առաջին փորձերը:

Այս ենթագլխում ներկայացված են մշակույթի և տնտեսության ոլորտների համագործակցության «արևմտյան» մոդելների հայաս-տանյան դրսևորումները, մշակույթի տնտեսականացման գործընթացը, մշակույթի ընկալման փոփոխությունները՝ հիմք ընդունելով մշակութային կապիտալի մասին Պ. Բուրդյոյի տեսական և մեթոդաբանական մշակում-ները: Մշակույթի տնտեսականացումը, մշակույթի ընկալման փոփոխու-թյունները և մշակույթի «գործիքայնացման» առաջին փորձերը կարևոր է դիտարկել մշակույթի գլոբալացման համատեքստում, երբ արևմտյան

մշակութային տարրերը սկսում են ինտենսիվորեն թափանցել Հայաստան՝ անկախացումից հետո:

2.3 Երեք նախագահ՝ երեք մշակութային քաղաքականություն:

Աշխատանքի երկրորդ գլխի վերջին ենթագլխում ներկայացված է մշակութային քաղաքականության երեք փուլերի ընդհանուր բնութագիրը՝ կախված քաղաքական առաջնորդի սոցիալ-մշակութային ընկալումների և քաղաքական էլիտա-մտավորականություն փոխհարաբերության բնույթից: Ելնելով Մ. Վեբերի տեսական հիմնադրույթներից՝ որոնց հիմքում ընկած են իշխանության լեգիտիմացման օրինաչափությունները, կարելի է առանձնացնել քաղաքական առաջնորդի երեք տեսակ՝ ավանդական, քարիզմատիկ և ռացիոնալ: Ներկա քննությամբ հիմնավորվում է այն մոտեցումը, որ հայաստանյան իրողություններին ավելի բնորոշ են հիբրիդային տիպերը, օրինակ՝ քարիզմատիկ-ռացիոնալ, կամ ավանդական-քարիզմատիկ և այլն: Մասնագիտական հետազոտություններում, որպես կանոն, քաղաքական առաջնորդի կերպարի վերլուծությունը հիմնականում քաղաքագիտական համատեքստում է ներկայացվում: Մի շարք հետազոտություններում քաղաքական առանջորդի կերպարը քննարկված է քաղաքական համակարգի կառուցվածքի, քաղաքական որոշումների ընդունման և գաղափարաբանության ձևավորման տեսանկյունից: Մեր հետազոտությունը տարբերվում է արդեն կատարված վերլուծություններից և աշխատանքներից նրանով, որ փորձ է արվել ընդգծել քաղաքական առաջնորդի սոցիալ-մշակութային կերպարի առանձնահատկությունները, անհատի մշակութային հայացքների պրոյեկտումը մշակութային քաղաքականության մեջ:

Քաղաքական առաջնորդի սոցիալ-մշակութային կերպարի և իշխանություն-մտավորականություն փոխահարաբերությունների քննությամբ կարելի է առանձնացնել ՀՀ մշակութային քաղաքականության հետխորհրդային զարգացումների երեք փուլ.

1. 1991-1998 թթ., անցումային շրջանի մշակութային քաղաքականություն, լիբերալ-ազատական մոդելի ձևավորման փորձեր. Լ. Տեր-Պետրոսյանը՝ որպես քարիզմատիկ-ռացիոնալ առաջնորդ:

2. 1998-2008 թթ., մշակութային քաղաքականության կայունացման շրջան, խիստ կենտրոնացված բյուրոկրատական համակարգի վերականգնման փորձեր. Ռ. Քոչարյանը՝ որպես ավանդական-քարիզմատիկ առաջնորդ:

3. 2008-2018 թթ., մշակութային քաղաքականության խառը մոդելի ձևավորում, պետական բյուրոկրատական և լիբերալ-ազատական

մոդելների համադրում, արևմտյան փորձի տեղայնացում. Ս. Սարգսյանը՝ որպես ավանդական-ռացիոնալ առաջնորդ:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ.
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ. ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԻՄԱՍՏԱՅԻՆ-ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ (ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՆԵՐԻ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ատենախոսական աշխատանքի վերջին գլուխը նվիրված է 20-րդ դարավերջի հասարակարգային փոփոխությունների պայմաններում մշակութային քաղաքականության մեջ պետական մշակութային ինստիտուտների ձևաբանական և բովանդակային փոփոխությունների ներկայացմանը: Առանձնացվել է մշակութային քաղաքականությունն արտացոլող երկու առանցքային կառույց՝ մշակույթի տունը և ստեղծագործական միությունը: Այս երկու մշակութային կառույցներն էական նշանակություն են ունեցել հանրային գաղափարա-մշակութային դաշտի ձևավորման և ինտելեկտուալ-գաղափարական վերնախավի կազմավորման համար:

3.1 Մշակույթի տների գործունեությունը, իմաստային-գործառութային փոխակերպումները Հայաստանի խորհրդային և անկախության տարիներին:

Առաջին ենթագլխում նկարագրված է մշակույթի տների գործունեությունը, իմաստային-գործառութային փոխակերպումները Հայաստանի խորհրդային և անկախության տարիներին: Մշակույթի տները, որոնք ձևավորվել էին խորհրդային գաղափարախոսական շրջանակներում, քաղաքական, մշակութային և սոցիալական խնդիրների լուծման յուրօրինակ մեխանիզմ էին (օր.՝ քաղաքական գաղափարախոսության և քաղաքական որոշումների տարածում, խորհրդային մշակույթի տարածում, «սոցիալիստական ոգով դաստիարակում», ազատ ժամանակի վերահսկում և այլն): Հետխորհրդային շրջանում կորցնելով իրենց պետական և սոցիալական նախկին կարգավիճակը՝ մշակույթի տները ենթարկվեցին որոշ փոխակերպումների:

Առաջին. հասարակարգային փոփոխության արդյունքում մշակույթի տներն այլևս քաղաքական քարոզչության խնդիր չեն ունեցել, ուստի կարիք է զգացվել դրանց վերիմաստավորման և նոր գործառույթների որդեգրման, ինչը տեղի չի ունեցել: Այլևս չկար պետական աջակցություն,

և այն մշակույթի տները, որոնք չկարողացան գտնել ներդրումներ, դադարեցին գոյություն ունենալ:

Երկրորդ. եթե խորհրդային շրջանում մշակույթի տունը վարչական մարմին էր, որն ադմինիստրատիվ գործունեություն էր իրականացնում տարածաշրջանի մշակութային կյանքը կարգավորելու և կազմակերպելու համար, ինչպես նաև կապող օղակ էր պետական կենտրոնական մարմինների և համայնքի միջև, ապա Հայաստանի անկախացումով մշակույթի տներն այլևս զրկվեցին իրենց ադմինստրատիվ-գործառնական իմաստից, կտրվեց նրանց կապը Մշակույթի նախարարության հետ, հետևաբար, նրանք զրկվեցին պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորման հնարավորությունից:

Երրորդ. 1990-ական թթ. սկզբին՝ համատարած սեփականաշնորհման գործընթացի ժամանակ, մշակույթի տները նույնպես շատ դեպքերում սեփականաշնորհվեցին և վաճառվեցին անհատների: Սեփականաշնորհված մշակույթի տներն ունեցան տարբեր ճակատագրեր. վերածվեցին արտադրական տարաբնույթ կառույցների: Սակայն այս գործընթացը համատարած բնույթ չկրեց, քանի որ շահութաբերության տեսանկյունից մշակույթի տները մեծ հետաքրքրություն չէին առաջացնում ներդրումների համար:

Չորրորդ. «Երկաթե վարագույրի» բացվելուց հետո, մշակութային տարբեր ալիքներ ներթափանցեցին Հայաստան, ժամանցային տարբեր պրակտիկաներ ընդունվեցին, ուստի մշակույթի տները, բնակչության ժամանցը կազմակերպելու, կրթելու իրենց գործառույթները մասամբ զիջեցին ժամանցային նոր պրակտիկաներին: Օրինակ, համացանցի տարածումը, տեղեկատվական տեխնիկայի մասսայականացումը, սմարթ հեռախոսների հասանելիությունը քաղաքացիների լայն զանգվածի համար ժամանցային նոր մշակույթ ձևավորեց, փոխվեցին մշակութային պահանջմունքները: Հատկապես կարելի է նշել ժամանցային պրակտիկաների փոխակերպումը հանրայինից՝ մասանվորի, խմբայինից՝ անհատականի:

Հինգերորդ. մշակույթի տներն անցնելով տեղական համայնքների ենթակայության տակ՝ հիմնականում լուծարվեցին: Արդյունքում ամենամեծ կորուստը կրեց համայնքը, որը, ի դեմս մշակույթի տան՝ կորցրեց այն ընդհանուր սոցիալ-մշակութային տարածքը, որը բնակիչների համատեղ քննարկումների, ընդհանրական կարծիքի մշակման և որոշումների կայացման, խնդիրների հանրայնացման հարթակ էր:

3.2 Ստեղծագործական միությունների ձևավորումը, գործունեությունը և փոխակերպումները Հայաստանի խորհրդային և անկախության շրջանում:

Երկրորդ ենթագլխում ներկայացված են ստեղծագործական միությունների ձևավորումը խորհրդային ամբողջատիրական համակարգում (1930-ական թթ.). ստեղծագործական միությունների առաջացման քաղաքական և մշակութային նախադրյալները, այն հիմնական խնդիրները, որոնք լուծում էին այս կառույցները, խորհրդային մտավորականության ձևավորման համար ստեղծագործական միությունների կարևորությունը, սոցիալական, քաղաքական, տնտեսական և մշակութային կապիտալների փոխակերպումները՝ ստեղծագործական միությունների ներսում, արտոնությունները, լծակները և մնացյալ մեխանիզմները, որոնք աշխատում էին որպես խորհրդային մտավորականության և խորհրդային մշակույթի ձևավորման ու տարածման հիմնական միջոցներ: Ինչպես մշակույթի տների պարագայում, այնպես էլ ստեղծագործական միությունների դեպքում՝ անկախացումից հետո խորհրդային մշակութային կառույցները պետք է առերեսվեին նոր համակարգի պայմանների հետ:

ՀՀ անկախացումից ի վեր նոր շուկայական հարաբերությունների ձևավորումը խթանեց մշակույթի ոլորտում բազմաթիվ ստեղծագործական խմբերի, միությունների ձևավորումը, անհատների մշակութային գործունեության ծավալումը, միջազգային մշակութային կապերի ակտիվացումը, մասնավոր տարբեր տիպի մշակութային կառույցների, հասարակական կազմակերպությունների առաջացումը, հետևաբար, ստեղծագործական միությունների գոյության անհրաժեշտությունը, այս կառույցների վերաիմաստավորման և վերակառուցման հրատապությունը դարձավ քննարկման առարկա թե՛ պետական, թե՛ մասնավոր հարթակներում: Ստեղծագործական միությունների գոյության իրավունքի և անհրաժեշտության խնդիրները կարելի է քննել մի քանի հարթություններում:

Դիտարկումները ցույց են տալիս, որ խորհրդային շրջանում կայացած մշակույթի գործիչների և արվեստագետների մի մասը, որոնք ժամանակին օգտվել են ստեղծագործական միությունների ընձեռած արտոնություններից և խորհրդային կառուցվածքում եղել են նյութական բարիքների շրջանառության օղակում՝ անկախացումից հետո ևս շարունակում են ակնկալել պետական աջակցություն, հովանավորչություն, արտոնություններ (հանգստյան տներ, արվեստանոցներ, պետական նյութական աջակցություն, ցուցահանդեսների կազմակերպում և այլն): Երիտասարդ մշակույթի գործիչներն այսօր կայացման այլ լծակներ ունեն և հիմ-

նականում իրենց սոցիալական կապիտալը փորձում են ձևավորել միջազգային մշակութային հարթակում և դուրս գալ միջազգային մշակութային շուկա (օրինակ՝ երիտասարդ գրողներն իրենց գործերը տպագրելու համար հովանավորներ են գտնում տարբեր հիմնադրամներից, նկարիչները փորձում են իրենց աշխատանքները դուրս բերել միջազգային շուկա և այլն):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ դժվար է միանշանակ խոսել անկախության տարիներին մշակութային քաղաքականության նոր համակարգի ձևավորման կամ դրա գոյության մասին, կարելի է անդրադառնալ միայն այդ համակարգի որոշ բաղադրիչներին, որոնք երևակվում են տարբեր ժամանակներում՝ կախված թե քաղաքական իշխանությունը Հայաստանում ինչպիսի ընդհանրական հայեցակարգ է ձևավորում, և նրանում մշակույթին ինչ դեր է հատկացվում:

Քննելով մշակութային քաղաքականության կայացման ընթացքը Հայաստանի երրորդ Հանրապետությունում՝ ատենախոսության մեջ փաստագրվել և ձևակերպվել են հետևյալ եզրակացությունները.

1. 1990-ական թթ. մշակութային քաղաքականության կայացման համեստ փորձերն ընթացան երկրի տնտեսական, քաղաքական ճգնաժամի, նոր իրավիճակին համապատասխան ազգային գաղափարախոսության և մշակութային քաղաքականության հայեցակարգի բացակայության պայմաններում: Նման պայմանները հնարավորություն չստեղծեցին մշակութային նոր ինստիտուտների ձևավորման համար:

2. Խորհրդային Միության փլուզումից հետո կազմալուծվեցին մի շարք մշակութային հաստատություններ: Թեև այսօր էլ դրանց մի զգալի մասը շարունակում է գործել (ստեղծագործական միություններ, մշակույթի տներ, գյուղական ակումբներ), բայց ակնհայտ է, որ վերջիններս չեն համապատասխանեցվել նոր՝ քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային իրավիճակին: 1990-ական թթ. նորանկախ Հայաստանի իշխանությունների բարձիթողի քաղաքականության արդյունքում խորհրդային մշակութային հաստատությունները կորցրին նախկինում ունեցած իրենց հասարակական և սոցիալական կարգավիճակը, հասարակությունում իրենց դերակատարությունը, բովանդակազրկվեց շատերի գործունեությունը: Այս ամենի փոխարեն չառաջարկվեցին այլընտրանքային լուծումներ քաղաքականության դաշտում, որոնք թույլ կտային՝ մեր-

ժելով նախորդ համակարգի իներցիան, ստեղծել նոր արժեքներ, գաղափարախոսություն և ըստ այդմ՝ նոր տիպի մշակութային հաստատություններ:

Արդյունքում խորհրդային մշակութային հաստատությունները սկսեցին պայքարել իրենց նախկին կարգավիճակի, արտոնությունների, դերակատարության վերականգնման համար: Շատ դեպքերում դրանք գոյատևման պայքարի մեջ մտան մշակութային ինդուստրիայում ձևավորվող նոր կառույցների հետ, մասնավորապես մշակութային հասարակական կազմակերպությունների, որոնք սկսեցին արագորեն գրավել դաշտը:

3. Անկախության տարիներին սկսված համատարած սեփականաշնորհման գործընթացները մի կողմից նախադրյալներ ստեղծեցին մշակութային քաղաքականության լիբերալ-ազատական մոդելի դրսևորման և մշակութային քաղաքականության մեջ մասնավոր ոլորտի ներգրավման համար, սակայն մյուս կողմից էլ՝ պետական ապակառուցողական մոտեցման արդյունքում դրանք կասեցվեցին մշակույթի առարկայացմամբ և «օլիգարխացմամբ», ինչն ավելի ընդգծված դարձավ 2000-ական թթ.:

4. ՀՀ մշակույթի օրենսդրական դաշտի կարգավորումներն ընթացան երեք հիմնական ուղղություններով՝ խորհրդային օրենքների վերասահմանում, ռուսական օրենսդրական մոդելի տեղայնացում և միջազգային կոնվենցիաներին ու հռչակագրերին համաձայն՝ օրենսդրական դաշտի փոփոխություն: Երեք ուղղություններն էլ հիմնականում մեխանիկական ձևեր էին, որոնք արհեստականորեն վերարտադրվում էին: Որևէ աշխատանք, ուրույն քաղաքականություն մշակելու փորձ, կամ գոնե կարիքները գնահատելու, վերլուծելու, հնարավոր ռեսուրսները հաշվարկելու, որոշակի գաղափարներ սահմանելու փորձեր չկային և անգամ եթե կային, ապա դրանք նույնպես ձևական էին: Դա թույլ է տալիս ենթադրել, որ անկախության շրջանում մշակույթը կառավարող համակարգն այլ ոլորտների նման դարձավ վարագույր՝ ստվերային կամ զուգահեռ իրականությունը քողարկելու համար, որտեղ մշակութային արժեքները կամ գործընթացները դառնում էին ոչ ֆորմալ պրակտիկաների օբյեկտ (շենքերի, սարքավորումների վաճառք, անօրինական սեփականաշնորհում և այլն):

5. 2000-ական թթ. մշակութային քաղաքականության դաշտը ենթարկվեց մի շարք փոփոխությունների և «արևմտյան հոսանքների» ազդեցությանը: Հայաստանի ներգրավումը մշակութային քաղաքականության միջազգային գործընթացների մեջ պայմանավորեց սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային տեղաշարժերը, որոնց

արդյունքում ձևավորվեցին մշակույթի իրավունքի իրացման հանրային նոր պահանջներ և հնարավորություններ. մշակութային քաղաքականության մեջ ի հայտ եկան նոր դերակատարներ և «թելադրողներ» ի դեմս միջազգային կառույցների (մասնավորապես ՅՈՒՆԵՍԿՕ-ն): Արդյունքում ՀՀ մշակութային քաղաքականությունը 2000-ական թթ. դարձավ առավելապես «հարմարեցված» արտաքին միջազգային համագործակցությունների համար, և պակաս կարևոր՝ երկրի ներսում իրական գործընթացների և մեխանիզմների մշակման համար:

6. Հայաստանյան մշակութային գործընթացների և իրողությունների քննությունը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ մշակութային գործընթացները սերտորեն կապված են քաղաքական առաջնորդի գործունեության և կերպարի հետ:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Muradyan H., The main principles of Making Cultural Policy in Armenia, “Civilization Researches”, 2015, N 3, pp. 33-38.
2. Մուրադյան Հ., Մշակութային քաղաքականության գործիքային տեսությունը և հայաստանյան իրականությունը, «Պատմություն և մշակույթ», 2017, էջ 441-447:
3. Մուրադյան Հ., Մշակույթի ոլորտի օրենսդրական դաշտի կարգավորման խնդիրներն արդի Հայաստանում, «Հայաստանի ազգային պատկերասրահի հիմնադիր տնօրեն Ռ. Դրամբյանի ծննդյան 125-ամյակին նվիրված» զեկուցումների ժողովածու, խմբ.՝ Աղասյան Ա. և ուրիշներ, Երևան, «Գիտություն», 2017, էջ 182-188:
4. Մուրադյան Հ., Խորհրդային Հայաստանի մշակութային քաղաքականությունը «ձնհալի» տարիներին, «Պատմություն և մշակույթ», 2018, էջ 376-383:
5. Մուրադյան Հ., Մշակույթի տները խորհրդային և ետխորհրդային Հայաստանում. ժառանգականությունը, գործառութային և իմաստային փոխակերպումները, «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ», 2019, թիվ 3, էջ 376-383:
6. Մուրադյան Հ., «Ստեղծագործական միությունների» ձևավորումը, գործունեությունը և փոխակերպումները Հայաստանի խորհրդային և անկախության շրջանում, «Տարածաշրջան և աշխարհ», 2020, թիվ 2, էջ 126-134:

7. Մուրադյան Հ., Երեք նախագահ՝ երեք մշակութային քաղաքակա-նություն, «Պատմություն և քաղաքականություն», 2021, թիվ 1 (12), էջ 100-116:

МУРАДЯН АЙКУИ МАНВЕЛОВНА

ФОРМИРОВАНИЕ НОВОЙ СИСТЕМЫ КУЛЬТУРНОЙ ПОЛИТИКИ В АРМЕНИИ. СОВЕТСКАЯ ТРАДИЦИЯ, НАЦИОНАЛЬНЫЕ РЕСУРСЫ И ЕВРОПЕЙСКИЕ ПЕРСПЕКТИВЫ (КОНЕЦ 20 - НАЧАЛО 21 ВЕКА)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 09.00.06 «Культурология»
Защита состоится 09 сентября 2021 г. в 14:00 ч., на заседании специализированного совета 007 по археологии и этнографии ВАК РА, действущего при Институте археологии и этнографии НАН РА
(адрес: 0025, г. Ереван, ул. Чаренца 15)

РЕЗЮМЕ

После распада Советского Союза культурная политика Армении находилась в поиске новых моделей и форм. С одной стороны, она пытается усвоить успешный опыт западных стран, с другой-преодолеть механизмы, инструменты и элементы авторитарного режима советской культурной политики. Таким образом, исследование культурной политики Республики Армения предполагало рассмотрение двух ключевых компонентов: первый - это «советское наследие» (восприятие концепта культуры, культурная революция, ликвидация неграмотности, инфраструктура управления культурой, система агитпропа, формирование советской интеллигенции), второй-локальная адаптация западного опыта и практик (подписание международных конвенций и деклараций, регулирование культурного законодательства в соответствии с вышеупомянутыми условиями, инструментализация и экономизация культуры и т. д.).

Анализ культурной политики в Армении имеет теоретическое и практическое значение как с точки зрения развития науки, так и в качестве научной основы для разработки и реализации культурной политики на практике. Основная цель кандидатской диссертации - изучить процесс становления и развития культурной политики Республики Армения после распада Советского Союза. Поскольку это невозможно сделать в отрыве от советского периода, соответсвенно большое внимание было уделено изучению советской культурной политики, ее этапов, механизмов и инструментов.

В основе исследования лежат анализ документов, сбор архивных материалов, полевые работы. Работа состоит из введения, трех глав, восьми

подразделов, заключения, библиографии и приложения. В приложении содержится список домов культуры, включенных в исследование, данные респондентов, список творческих союзов, данные участников экспертных интервью.

Данное исследование показывает, что формирование новой системы культурной политики в 1990-е годы происходило в отсутствие соответствующей национальной идеологии. После распада Советского Союза ряд культурных учреждений был распущен и лишен прежних привилегий. Хотя сегодня значительная их часть продолжает действовать (творческие союзы, дома культуры, сельские клубы), но очевидно, что они не адаптированы к новой политической, экономической, социокультурной ситуации. В 1990-е годы советские учреждения культуры утратили былой социальный статус и роль в обществе, деятельность многих лишилась государственного содержания. Взамен не было предложено никаких альтернативных решений в области политики, которые позволили бы, отказавшись от инерции прежней системы, создать новые ценности, идеологию и, соответственно, новый тип культурных институтов. В результате советские учреждения культуры начали борьбу за восстановление своего прежнего статуса, привилегий и роли. Во многих случаях они изо всех сил пытались выжить с конкурентной борьбе с новыми структурами, возникающими в культурной индустрии, в частности, с неправительственными организациями в сфере культуры, которые быстро начали занимать эту нишу.

В третьей республике регулирование культурного законодательного поля осуществлялось по трем основным направлениям: (1) повторное использование или переформулирование советских законов, (2) внедрение российской законодательной модели, (3) изменение законодательного поля в соответствии с международными конвенциями и декларациями. Все три направления были в основном механическими, которые производились искусственно. Не было ни серьезной исследовательской работы, ни попыток разработать уникальную политику или, по крайней мере, оценить потребности, проанализировать возможные ресурсы, разработать определенные идеи. Это позволяет предположить, что в период независимости система культурной политики, как и другие сферы, превратилась в занавес, скрывающий теневую или параллельную реальность, где культурные ценности или процессы стали объектом неформальных практик (продажа зданий, оборудования, незаконная приватизация и др.).

Результаты исследования позволяют сделать вывод, что культурная политика Армении в период с 1991 до 2018 всегда была ситуативной: с одной стороны, некоторые проявления советской культурной политики не были преодолены, с другой стороны, интеграция в западный культурный процесс в 2000-е гг. была в основном формальной, поэтому реальные культурные потребности игнорировались.

HAYKUHI MANVEL MURADYAN

FORMATION OF A NEW SYSTEM OF CULTURAL POLICY IN ARMENIA . SOVIET TRADITION, NATIONAL RESOURCES AND EUROPEAN PERSPECTIVES (LATE 20 - BEGINNING OF 21 CENTURY)

Dissertation for the degree of Doctor of History
on the specialization of "Cultural Studies" 09.00.06
The defense of the dissertation will be held on September 09, 2021, at 14:00 at the session of the Specialized Council 007 on Archaeology and Ethnography of SQC RA by the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of RA (address: 0025 Yerevan, 15 Charents str.)

SUMMARY

Since the collapse of the Soviet Union, the cultural policy of Armenia has been in search of new models and forms. On the one hand, it has been trying to implement the successful experiences of Western countries, and to overcome the mechanisms, tools and elements of the authoritarian regime of Soviet cultural policy, on the other. Correspondingly, the study of the cultural policy of the Republic of Armenia considered two key components: the first was Soviet heritage (the perception of culture, Cultural Revolution, the elimination of illiteracy, infrastructures of cultural management, the "agitprop" system, and the formation of the soviet intelligentsia), and the second was the adaptation of Western experience and practices (through signing international conventions and declarations, the regulation of cultural legislation according to the abovementioned conventions, the instrumentalization and economization of culture, etc).

The analysis of cultural policy in Armenia has a theoretical and practical importance for both the academic and public policy spheres. The main objective of the current thesis is to analyze the process of formation and development of cultural policies of the Republic of Armenia after the collapse of the Soviet Union and through the subsequent political regimes. However, a great deal of the work is devoted to soviet cultural policies and practices, as it seems impossible to understand the processes, mechanisms and tools of cultural management of the post-soviet period without references to the soviet-style one.

The research is based on the documentary analysis, collections of archival materials, and a qualitative field work. I made a series of in-depth interviews and field observations of activities of provincial Houses of Culture and the Creative Unions.

The current thesis consists of an introduction, three chapters with eight subsections, a conclusion, a bibliography and an appendix. The appendix contains a list of houses of culture involved in the research, the data on respondents (name, surname, place of work), a list of the Creative Unions, and information on experts interviewed.

Having analyzed the models of cultural policy in the Third Republic of Armenia, the following conclusions have been done.

The development of a new cultural policy system in the early 1990s took place in the absence of a particular national ideology. After the collapse of the Soviet Union, a number of cultural infrastructures and institutions were dissolved and/or lost their privileged positions. Although currently a significant part of them keeps operating (the Creative Unions, houses of culture, village clubs), they clearly do not seem to be adapted to a new political, economic and socio-cultural situation. Having lost their status and roles in the early 1990-s, Soviet cultural institutions got simultaneously deprived of content and meaning. Instead, no alternative structures were developed in the field of politics, which would suggest new values, a new ideology, and, correspondingly, new types of cultural institutions, through overcoming the inertia of previous systems. As a result, Soviet cultural institutions began to compete for their former status, privileges, and role with new structures such as cultural NGOs and cultural industry enterprises that spontaneously emerged and quickly expanded in the field.

In the period of the third republic, the regulation of the cultural legislative field was carried out in three main directions: (1) reuse or redefinition of the Soviet laws, (2) adoption of the Russian legislative model, (3) change of the legislative field in accordance with international conventions and declarations. All three directions were mainly mechanical ones, just artificially reproduced. There was no analytical work, no attempt to develop some original policies, or at least to assess the needs and possible resources, or to develop some ideas. Moreover, it may be assumed that during the period of independence, the system of cultural policy, like many other spheres, served a curtain to hide the parallel reality, where tangible cultural values or processes became objects of informal practices such as sale of buildings, equipment, illegal privatization, etc.

It may be also concluded that cultural policy of Armenia (1991-2018) was always situational: on the one hand, problems of the Soviet system were never overcome, and on the other hand, the integration to the Western cultural and legislative space was only formal, without taking into account the real cultural processes and needs.